


10230



1920

2003


Հրատարակութիւն «Կենաքենա» Գրալիանուանոցի — թիւ 7

Ա. ԽՍԴԳԱԿԵՑ

# ԱՐՈՒ ԼԱՀԱ ՄԱՆՈՒ

Ժ Ո Ւ Տ

Գ. ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ



Ա. ՏԱՐԵ-ՄԱՏԵՆԱԾՈՂ ՀԱՅԿԱՆԵՐ-ԹԻՒ 2

256

Ա. ՊՈԼԻԿ  
1920

ՏԱՐԱՎԻ. ՍԱՆՁԱԿՉԵԱՆ

20 ԴՐ

891.99  
հ-75

ՈՒՆԻ

# ՆՈՐԱԳՈՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

	Դրա
ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ, Աւետիս Ահարոնեան . . . . .	110
ԱՅՆ ՍԵՒ ՕՐԵՐՈՒՆ . . . . ., Պատկերներ, Արամ Անտոնեան . . . . .	75
ՄՈՒՏՈՒՄ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԻ, ՍՎԱ.ԶԼ. ՊԱԹՈՒՄ, Գրի առաւ Տ. Զապէլ Եսայեան . . . . .	50
ԱՐԱՐՈ. — ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌՖՈՆԻ, Սուրէն Պարթևեան . . . . .	75
ԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Մանրաժան մեծադիր քարտէսով, Յ.Յ.Չազմագճեան . . . . .	250
ԱԽԱԿՆԵՐ ԵՒ ԽԵԱԿՆԵՐ, Հայ Վրանաքաղաքին Տարեգիրքը, Տօքթ. Մ. Ապրի ՏԱՐԵՑՈՅՑ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ, Կազմեց Տօքթ. Լ., Համբարձումեան . . . . .	100
ՀՐՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ, Տրամ 4 արար, Լեւոն Շանթ . . . . .	75
ԴՐԱՒԱԴՆԵՐՀ.Յ.Դ.ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԻՑ, Ա.Նորեան(Սրոէն Միքայէլեան) . . . . .	150
ԱՆՀԵՏԱՅՈՂ ԴԵՄՔԵՐ — ԳՐ. ԶՈՀՐԱՊ, Արշակ Ալպօյաձեան . . . . .	100
ԵԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՄԱԿԱԲՈՅՑՆԵՐԸ, Եր. Օտեան . . . . .	40
ԴԵՄՊԱՆ ՄՈՐԿՆԵԹԱՍՈՒԻ ՊԱՏՄԱԾՆԵՐԸ, Թարգմ. Մ. Շամտանճեան . . . . .	100
ԴԵՄՊԱՆ ՃԵՐՂՐՄԻ ՊԱՏՄԱԾՆԵՐԸ, Թարգմ. Մ. Շամտանճեան . . . . .	80
ԳՈՒՅՅԻ ԿԱՄ ՄՐԻԿԱՅ ՎԱՆԱԿԱՆԻ, Ուիլերմ Լը Քէօ . . . . .	50
ԱՆՄԱՀՆԵՐ — Դ. ՎԱՐՈՒԻԹԱՆ, Լ. Էսամանեան . . . . .	30
ԹԱՐՊՍ ԼԵՒՈՆԻ, Ծիրենց (Լաթակազմ) . . . . .	100
ԴՈՒԱԱՆԵՐԳԵՐ, Կ. Սիտալ . . . . .	100
ԴԱՎԱՐԱԿ. ԴԵՊՔԵՐ ՀԱՅՈՑ ՊԱՏՄ. Մէջ, Արոէն Միքայէլեան, Ա. Հատոր . . . . .	150

## ՍՊԱՌԵԼՈՒ ՄՕՏ

ԱՐԱՋԱԿԱՆ ԳՈՐԾԸ, Սիամանթօ.	150
ՀԵԹԱՆՈՍ ԵՐԳԵՐ, Դ. Վարուժան . . . . .	150
ՀԱՅԱՐԴԻՆԵՐ, Ա. և Բ. Շարք, Սիամանթօ . . . . .	30
ԴՐԱԿԱՆ ԱՍՈՒԼԻՌՈՒՆԵՐ, Լ. Շանթ, Ո. Զարդարեան, Գր. Զօրապ, Դ. Վարուժան ևայլն . . . . .	50
ԳԵՂԱՐՔՈՒԵԱՏ, Գ. Լեւոնեան, Գ. հատոր 200, Ե. հատոր 200, Զ. հատոր . . . . .	250
ՀԱՅ ՖՐՈՂՆԵՐ, Ա. Մաս — Խուսահայ Գրողներ . . . . .	250
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, Լէօ, Ա. հատոր . . . . .	300
ՈՉՉ-ԱՐԱՎԱՆ ՀԱՆԴԻԾ, Եր. Լալայիան, 25 հատոր . . . . .	3000
ԴՐԱՅ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, Գիւտ Քնյ. Աղանեանց, 12 հատոր . . . . .	4000
ԵՐԱՌԱԶՄՅԱՅ ԲՈՈԱՐԱՆ, Նորայր Բիւղանդացի . . . . .	800
» » Եղիս Տէմիրձիպաշեան . . . . .	400
ԱՆԴԻԶԱՅ » Երան 120, Եղինը Հայ.-Անգլ. մասով . . . . .	150

8919  
Բ-75

Հրատարակութիւն Կենտրոնական Գրախառանոցի — թիւ 7

ՄԻ. Ի ԲԱՐԱԿԱՆԸ

# ԱՐՈՒ ԱՐԱ ՄԱԿԱՐԻ

Ժ Փ Ս Ւ Ւ Թ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ՄԱՏԵՆԱՅԱ ՀԱՅԿԱՆ — Ա. ՇԱՐԱ

Կ. ԳՈԼԴԻ  
1920

ՏԱԿԻՐ. ՍԱՆՉԱԿՃԵԱՆ

ՀԵՐԱՐԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
HARRY G. BERBERIAN  
837 WASHINGTON ST.  
BOSTON MASS.

## ԱՐՈՒ ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ

(ԱՐԱԲ ԲԱՆԱՏԵՂ Խ—XI ԴԱՐՈՒՄ)

Սրու Լալա Մահարին,  
Հռչակաւոր բանասեղձը Բաղդադի,  
Երեք տասնեակ տարի ապրեց Խալիֆաների նոյական բաղամում,  
Ապրեց փառքի եւ վայելիի մէջ.  
Հզօների եւ մեծատուների հետ սեղան նստեց,  
Գիտութեների եւ իմաստութեների հետ վէճի մատ,  
Սիրեց ու փորձեց ընկերեներին.  
Եղաւ ուրիշ-ուրիշ ազգերի հայրենիքներում, տեսաւ եւ դիտեց մարդկանց եւ օրէնքները.  
Եւ երա խորաքափանց ողին ճանաչեց մարդուն, ճանաչեց եւ խորագին ատեց մարդուն  
Եւ երա օրէնքները:  
Եւ որովհետեւ նա չուներ կիմ եւ երեխաներ՝ իր բոլոր հարաւորիներ բաժանեց աղքաներին,  
Վերցրեց իր ուղերի բարաւանը եւ մի գիւղ, երբ Բաղդադը բռն էր ստել Ֆիգիսի նո-  
նիածածկ ափերի վրայ, — գաղտնի հեռացաւ բաղադից ...

57 Զ 66 - ահ



5/68-71



## ԱՐՈՒ ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ

Առաջին Սուրահ

**Բ**ւ քարաւանը Սրու Լալայի աղքիւրի նման մնղմ կարկաչելով  
Քայլում էր հանգիստ նիրհած զիշերով, հնչուն զանգերի անու շ զօղանջով  
Հաւասար քայլով չափում էր ճամբէն այն քարաւանը ոլո՛ր ու մոլո՛ր,  
Եւ զօղանջները ծորում քաղցրալուր, ողողում էին դաշտերը անդարը:

Մեղկ փափկութեան մէջ Բաղդադն էր նիրհում զէննաթի շքեղ, վառ երազներով,  
Գիւլստաններում ըլքուն էր երգում զագէներն անուշ՝ սէրոյ արցունքով:

Շատրւանները քըքզում էին պայծառ ծիծաղով աղամանդեղէն,  
Բոյր ու համբոյր էր խնկարկում չորս կողմ Խալիֆաների քէօշքից ըիւրեղէն:

Եւ քարաւանը օրօ՛ր ու շորո՛ր զնգում էր առաջ ու ետ չէր նայում,—  
Անծայր ճամբէն էր Սրու Լալային բիւր հրապոյրով կանչում, փայփայում.

— «Գնա՞», միշտ զնա՞», իմ քարաւանս, եւ ետ մի՛ դարձիր, քայլէ՛, կանգ մի՛ առ.  
Այսպէս էր խօսում իր սրտի խորքում Սրու Մահարին, մեծ բանաստեղծը:

Գնա՛ մենաւոր վայրերն ամայի , ազատ , կոյս եւ սուրբ , զմբուխտնայ հեռուն .  
Դէպի արեւը ոլացի՛ր , գնա՛ եւ սիրտս այրիք արեւի սրտում :

Ախ , մնաք բարեւ չեմ ասում ես ծեզ , իմ հօր գերեզման , օրօ՛ցը մայրական ,  
իմ հոգին յաւէրժ խոռովէ ծեզ հետ , հայրենական յա՛րկ , յուշն' բ մանկական :

Ես շա՛տ սիրեցի իմ ընկերներին եւ բոլոր մարդկանց՝ հեռաւո՞ր , մօտի՛կ ,  
եւ սէրս հիմա իժ դարձաւ թունոտ , խայթում է սիրտս հուր ատելութեամբ :

Ասում եմ , ինչ որ սիրել եմ առաջ , ինչ որ տեսել եմ մարդու հոգու մէջ .  
Մարդու հոգու մէջ համրել եմ հազար նողկանք ու գարշանք՝ զազիր ու նանիր :

Բայց ես փախչում եմ գարշանքի հազար ու մէկերրորդից — կեղծիքից ստոր  
Որ զարդարում է երեսը մարդու անմեղ սրբերի լուսապսակով :

Մարդկային լեզո՛ւ , դու որ երկնային լազուր շղարշով , բոյրով համբոյրով  
Ծածկում ես մարդու դժոխքը հոգու — թոթվել Ե՞ս արդեօք նշմարիտ մի խօսք :

Մարդկային լեզո՛ւ , թունաւոր ալաք , մեղրի ծորանքով սիրտս խոցեցիր ,  
իմ հոգում մեռաւ սիրոյ մի երկինք , մի վառ արեգակ , եւ յոյս , եւ հաւատ :

Գնա՛ անապատ , իմ քարաւանս . վայրի , ամայի անապատն այրւող ,  
եւ իջեւանիր այն պղնձացած շէկ ժայռերի տակ , զազանների մօտ :

Խիեմ վրա՛նս , օձ-կարիճների բների վրայ խիեմ վրանս ,  
Այնտեղ բիւր անգամ , եւ ապահով է . եւ քաղցր ու անդորր . քան թէ մարդ-  
կանց մօտ :

Քան թէ ընկերի կուրծքը խաբուտիկ , ուր դնում էի զլուխս սիրով ,  
Կուրծքը ընկերի , որ շղարշում է անդարձ կորստեան անդունդը ստի:

Այնքան ժամանակ , որքան արեւը կ'այրէ Սինայի ճակատը խրոխտ ,  
եւ անապատի դեղին շեղեբը ալիքների պէս յործանքներ կը տան —

Ես չեմ ցանկանայ տեսնել երեսը մարդկանց . ընկերի , հարազատների :  
Ես չեմ ցանկանայ տեսնել ու լսել նրանց գործերը՝ չա՛ր , ունայն պատի՛ր . . . .

Եւ վերջին անգամ Աբու Մահարին ետ դարձաւ նայեց նիրհած Բաղդադին ,  
Գարշանքով շրջեց ճակատը կնճռուած եւ փարւեց ուղտի թաւ պարանոցին :  
Սիրով գուրգուրեց , զերմ շրթունքներով համբուրեց ուղտի աչքնը վճիտ ,  
եւ թերթիչներից նրա կախւեցին անզուապ արցունքի երկու այրող շիթ :  
Անուշ զնզոցով , հանգիստ , միաչափ մեղմ օքորւում էր այն քարաւանը ,  
Քայլում էր առաջ դէպի անապատ , կուռական ափե՛ր , անյայտ հեռունե՛ր . . . .



Երկրորդ Սուրահ

Եւ ոլորւում էր այն քարաւանը բարձր արմաւների շարքերի միջով,  
Փոշի էր հանում, փոշու քարաւան, եւ բարակ քամին վարում էր փոշին:

«Գնա՛, քարաւան, ի՞նչ ենք մենք թողել, որ ափսոսանքով նայենք մեր ետեւ.  
Այսպէս էր խօսում իրեն սրտի հետ Աբու Մահարին, մեծ բանաստեղծը:

Ինչ կայ մեր ետեւ, որ մենք կարօտով ետ դառնանք նորից, իմ քարաւանս,  
Թողել ենք ընկե՞ր, կի՞ն ու բարեկա՞մ, փառք ու ընտանի՞ք եւ հարստութիւն,

Թողել ենք մարդկա՞նց, համայնք հայրենի՞ք, օրէնք, իրաւունք եւ արդարութի՞ւն.  
Քայլէ, կանգ մի առ. թողել ենք միայն շղթայու կապանք, կեղծիքու պատրանք:»

Եւ կինն ի՞նչ է որ... խորամանկ, խարող, արիւնարբու սարդ, յաւիտեան նանիր,  
Որ հացդ է սիրում, համբոյրի մէջ թոյն եւ քո գրկի մէջ ուրիշին ծախտում:

Խարխուլ մակոյկով յանձնւիր ծովին, քան թէ հաւատա կնոջ երդումին,  
Նա-կաւա՛տ, վարա՛ր, մի չքնաղ դժոխք, նրա բերանով իրվին է խօսում:

Դու երազել ես աստղը հեռաւոր, հրեշտակաթեւ շուշանը մաքուր,  
Որ քո վէրքերին բալասան լինի, կեանքի ցաւի տակ ոսկէշող երազ:

Դու տենչացել ես լոյս-ափերի մէջ՝ քեզ իրեն կանչող աղբիւրի երգին,  
Անուշ արտասուել երկնային կրծքին եւ անմահութեան ցողն ես երազել.

Բայց սէրը կնոջ ծարաւած հոգուդ աղ-զուր է տալիս, որ միշտ տոչորւիս,  
Հուր տուփանքի մէջ յաղթական կնոջ մարմինը լիզես եւ չյագենաս:

Օ՛, կնոք մարմի՛ն պագզո՛տ, օձեղէ՛ն, դիւական անօթ չարի, ոճիրի,  
Դու, որ մսեղէն դառն հաճոյքով խաւար ես դարձնում արեւը հոգու:

Ատում եմ սէրը՝ յաւիտեան խոցող, յաւիտեան այրող ովկիանը կրքի,  
Սյդ քաղցը թոյնը, որով արբողը ստրուկ է դառնում եւ կամ բռնակալ:

Ատում եմ սէրը՝ մահի պէս անգութ, միշտ բեղմնաւորող չարիքը անսանձ,  
Աղբիւրն անսպառ որ կուտակում է աշխարհի վրայ տիղմը եղեռնի:

Ատում եմ կնոջ, համբոյրը նրա, գարշում եմ շողում, պիղծ գգւանքներից,  
Փախչում եմ նրա ճահիճ-մահիճից եւ անիծում եմ երկունքը նրա:

Երկունքը դաժան եւ յաւէրժական, որ հեղեղում է վտառն իժերի,  
Որոնք խայթում են բզրկուում իրար, տուփանքով ժահրոտ աստղերը պղծում.

Սրիկայ է նա, ով հայր է լինում, ով երջանկաւէտ ոչնչութիւնից,  
Գոյութեան կոչում թշւառ հիւլէին եւ գլխին վառում Գեհենը կեանքի:

«Իմ հայրը իմ դէմ մեղանչեց, սակայն ես ոչ ոքի դէմ չմեղանչեցի». \*)  
Այս իմ կտակը թող գրւի շիրմիս, եթէ ունենամ շիրմ լուսնի տակ:

Այնքան ժամանակ, որքան որ ծովը կը փարէ զմրուխտ ափերն Հէջազի,  
Ես ետ չեմ դառնայ կնոջ մօտ երեք, ես չեմ կարօտնայ թովկանքին նրա:

Կը գգւեմ վայրի տատասկը դժնեայ եւ կ'համբուրեմ փշերը նրա,  
Գլուխս կը դնեմ այրուող ժայռերին եւ կուլամ նրանց ջերմ կրծքի վրայ...»:

Եւ քարաւանը մեղմիկ զօղանջով չափում էր ճամբէն ոլո՛ր ու մոլո՛ր, ։  
Հանգիստ ու անդորր գնում էր առաջ դէպի անապա՛տ, ոսկեղէն հեռո՛ւն:

Զանգակներն, ասես, հեկեկում էին եւ ծորում հա՛տ հա՛տ հնչուն արցունքներ,  
Քարաւանն, ասես, լալիս էր անուշ, ինչ որ Մահարին սիրել, թողել էր:

Եւ զեփիւռների սրինգները մեղմ զեղզեղում էին Շարքիներն անո՛ւշ,  
Սիրոյ վէրքերի, վշտոտ կարօտի եւ երազական քնքուշ թախծանքի:

\*) Այս առզեւ գրւած է բանաստեղծի չերմի վրայ:

Եւ Արու Լալան խորհում էր մռայլ եւ նրա վիշտը անծայր եւ անվերջ,  
Ինչպէս իր ուղին, որ գալարւում է, ծգւում է անծայր եւ վա'խճան չունի:

Իր հոգու խորքում թախծում էր անյոյս Արու Մահարին օրեր, վիշե՛րներ.  
Հայեացքը յառած անյայտ աստղերին՝ հիւսւելով անծայր ճանապարհի հետ:

Եւ ետ չէր նայում անցած ճամբէքին եւ չէր ափսոսում թողած անցածին,  
Ողջոյն չէր վերցնում, ողջոյն չէր տալիս անցնող ու դարձող քարաւաններին...



Եռուղ Սուրահ

Եւ քարաւանը Արու Լալայի աղբիւրի նման մեղմ կարկաչելով,  
Հեզ լուսնկայի շողերի միջով քայլում էր առաջ հանգիստ ու անդո՛րը:

Եւ լուսինն, ինչպէս ջէննաթի մատաղ փէրիի կուրծքը՝ պայծա՛ռ, լուսափա՛լ,  
Մերթ ամաչելով պահում էր ամպում եւ մերթ թրթուուն շողում էր չքնաղ:

Մաղկունքը բուրեան նիրհ էին մտել՝ զարդավառ շքեղ ադամանդներով,  
Թուրգուրում էին քննուշ մրմունցով ծիածանաթեւ հաւքերը էրար:

Մեխակի բոյրով հոմն էր փսփսում հէքեաթներն հազար ու մէկ զիշերւայ,  
Արմաւն ու նոժին անո՞ւշ քընի մէջ սրօրւում էին ճամբէքի վրայ:

Ճովի զրոյցին ականջ դնելով Արու Մահարին խօսում էր անծայն.—  
«Աշխարհն էւ ասես, մի հէքեաթ լինի՝ անսկիզը, անվերջ, շքեղ դիւթական:

Եւ ո՞վ է հիւսել հէքեաթն այս վսեմ, հիւսել աստղերով, բիւր հրաշքներով,  
Եւ ո՞վէ պատմում բիւր բիւր ծեւերով՝ անդո՛ւլ եւ անխոնց՝ այսպէս թովչանքով:

Ազգեր են եկել, ազգեր գնացել եւ չեն ըմբռնել իմաստը նրա,  
Բանաստեղծներն են փոքր ինչ հասկացել եւ թոթովում են հնչիւններն անմահ:

Ոչ ո՞ք չէ լսել սկիզբը նրա, եւ չէ լսելու վախճանը նրա,  
Ամէն հնչիւնը դաշեր է ապրում, ամէն հնչիւնին վերջ, սկիզբ չկայ:

Բայց ամէն մի նոր ծնւածի համար նորից է պատմւում հէքեաթն այս շքեղ,  
Նորից սկսում եւ վերջանում է ամէն մի մարդու կեանքի հետ մէկտեղ:

Կեանքը երազ է, աշխարհը՝ հէքեաթ, ազգեր, սերունդներ — անցնող քարաւան,  
Որ հէքեաթի մէջ, վառ երազի հետ քայլում է անտես դէպի գերեզման:

Կոյր ու գուլ մարդիկ , առանց երազի , առանց լսելու հէքեաթն այս ոսկի ,  
Իրար կոկորդից պատառ էք հանում եւ իրար հրում դէպի գերեզման:

Զեր օրէնքները —լուծ ու խարազան եւ անելք մի ցանց խօլական սարդի ,  
Եւ որոնց ժահրով թունաւորում էք երազն այս գողտրիկ , հէքեաթն այս վսեմ:

Եղկելի մարդիկ , փոշի կը դառնան ծեր չար սրտերը , ծեր գործերը սին ,  
Եւ ժամանակի ծեռքը անտարբեր կը սրբէ , կ'աւլէ ծեր հետքերն արնոտ:

Եւ ունայնաշունչ հողմը կը շաչէ ծեր գերեզմանի քարերի վրայ ,  
Խսկ վայելելու դուք միշտ ապիկար երազն այս չքնաղ , հէքեաթն այս շքեղ...»

Դոհար աստղերի քարաւանները թափառում էին երկնի ճամբէքով ,  
Եւ զօղանջում էր ողջ երկինքն անհուն՝ աստղերի շքեղ . անշէջ զնգոցով:

Եւ արար աշխարհ լցւած էր , դիւթւած զօղանշիւններով յաւէ՛րժ երկնայի՛ն ,  
Եւ վերասլաց լսում էր հոգով Սբու Մահարին վսեմ զօղանջին:

—«Գնա՛ , քարաւանս , մեղմ , հնչիւններդ հիւսելով երկնի լոյս զօղանշի հետ ,  
Վիշտս տուր հովին , քայլէ՛ բնութեան ծոցը մայրական եւ մի նայիր ետ...

Տա՛ր ինձ լուսազգեստ մի հեռո՛ւ եզերք , անյայտ , հեռաւո՛ր , մենաւո՛ր ափեր ,  
Սուրբ մենակութիւն , դու իմ օազիս , դու երազների աղբիւր զովաշունչ:

Հռութեան երկինք , խօսի՛ր դու ինձ հետ աստղերիդ լեզւով եւ ամօքի՛ր ինձ ,  
Գուրգուրիր հոգիս՝ աշխարհից խոցւած , մարդուց խայթւած հոգիս վիրաւոր:

Իմ մէջ այրւում է մի անյագ կարօտ , յաւ իտեան լացող կարեկից մի սիրտ .  
Եւ իմ հոգում կայ մի շքեղ երազ , եւ սուրբ արտասուք , եւ սէր անսահման:


Ոզիս ազատ է , ես չեմ հանդուրժում իմ վերայ իշխող ո՛չ մի զօրութեան ,  
Եւ ո՛չ մի սահման , եւ ո՛չ մի օրէնք , ո՛չ չար ու բարի եւ ո՛չ դատաստան:

Իմ զլխու վերեւ չպէտք է լինի ո՛չ մի հովանի , ո՛չ մի իրաւունք ,  
Եւ իմ կեանքից դուրս ամէն ինչ բանդ է , եւ ստրկացում , եւ բռնադատում:

Ես կ'ուզեմ լինել անսահման , ազատ , անպարտք , անիշխան , այլ եւ անաստած ,  
Հոգիս տենչում է միա՛յն , միմիա՛յն անհուն , անպարփակ մեծ ազատութեան:»

Եւ քարաւանը քայլում էր առաջ եւ նրա վերեւ շողշողում էին  
Մանկան ժպիտով աստղերը պայծառ — այն յաւէրժավառ աստղերը ազատ:

Զուլալ գիշերին դիւթական ցոլքով փալքում էր ճամբէն վերուզեայ հեռուում ,  
Եւ քարաւանը օրօ՛ր ու շորո՛ր քայլում էր անդորր վերուզեայ հեռուուն...



Զորբող Սուրահ

Դիշերն ահարկու, ե՛ւ սեւ, ե՛ւ հսկայ մի թռչունի պէս թեւերը փռեց,  
Անծիր թեւերը իջան, ծածկեցին քարաւանն, ուղին եւ դաշտերն անափ:  
Եւ հորիզոնից մինչ հորիզոններ մռայլ ամպերով երկինքը լցւեց,  
Զէին շողշողում լուսին ու աստղեր, խաւարն, ասես թէ՝ խաւարով պատած,  
Եւ հողմերն ահեղ նժոյգների պէս՝ սանձարձակ վայրի արշաւում էին,  
Յործանքներ տալով, եւ հողմն ու փոշին այրւած դաշտերից խառնուս  
ամպերին:

Հազար ծայներով եւ մահասարսուռ շառաչում էին եւ աղաղակում,  
Ասես, վիրաւոր գազաններ էին, մռնչում-ոռնում հողմերի բերնով:  
Եւ ծորերի մէջ գալարւում էին եւ արմաւենու անտառների մէջ,  
Հեծեծում էին հողմերը տխուր, ասես թէ՝ մի սիրտ ողբալիս լինէր:  
— «Դնա՛, քարաւան, հողմերի դիմաց աննկուն գնա՛, քայլէ՛, կանգ մի՛ առ.  
Այսպէս էր խօսում իր սրտի խորքում Սրու Մահարին, մեծ բանաստեղծը.

Շառաչէք զլխիս, ամենի հողմեր, դուք, մրրիկներ, պայթեցէք զլխիս,  
Ես բաց հակատով ծեր դէմն եմ կանգնած, զարկեցէք ճակտիս, ես վախեցող չեմ:  
Ես ետ չեմ դառնայ պիղծ քաղաքները, ուր բազմաժխոր կրքերն են եռում,  
Քաղաքներն արնոտ, ուր մարդը դաժան յօշոտում է միշտ իր նմաններին:  
Իմ անտուն գլուխ, դու տուն չես դառնայ, ինքդ մարեցիր օճախդ հայրերի,  
Վայ նրան, ով որ տուն ու տեղ ունի, կապւած է շան պէս իրեն տան շէմքին.

Արշաւէ՛ք, հողմե՛ր իմ հօր տան վրայ, քանդէ՛ք, աւերէ՛ք հիմքերը նրա,  
Եւ փոշին ցրւէք մեծ աշխարհով մէկ.— անծայր ճամբէն է իմ տունը հիմա:

Մենակութիւնն է իմ հայրենիքը, երկինքն աստղաբիր — յարկս հայրական,  
Եւ քարաւանն է իմ տունը հիմա, եւ իմ հանգիստը — ճամբէս անկայան:

Դու կախարդ ճամբայ, յաւիտեան անյայտ, յաւիտեան դիւթող իմնոր հայրենիք,  
Տա՛ր ինձ, — իմ սիրտը յաւիտեան լացող, այնտեղ, ուր աչքը չի տեսել մարդու:

Բարեկամներից հեռո՛ւ տար դու ինձ, որոնք անկշտում մոծակների պէս  
Հետեւում են քեզ, երբ արիւն ունիս, իսկ երբ ցամաք ես, կ'մոռանան քեզ:

Իմ ընկերներից հեռո՛ւ տար դու ինձ, նրանց սուտ սիրուց դու պաշտպանիր ինձ,  
Ես ոսոխներիս լաւ եմ ճանաչում, զիտեմ պաշտպանւել նրանց դաշոյնից:

Իմ բիւր վէրքերը ո՛վ կնիւթէր ինձ, թէ Ալինէին ընկեր, բարեկամ,  
Որոնք համբոյրով սիրտս բացեցին, որոնք համբոյրով խայթեցին նրան:

Ի՞նչ է ընկերը — յաւէտ բամբասող, միակ խուզարկու հետքիդ, քայլերիդ,  
Ծանօթ շները չեն հաջում վրայ, ծանօթ մարդիկ են հաջում քո վրայ:

Ի՞նչ է ընկերը — լաւիդ նախանձող, նենգ ու չարակամ, մահինդ պղծող,  
Իմ ազնիւ ծոցում ես օծ սնուցի... թոփ'ր, քարաւան, էլ ետ մի՛ դարձիր:

Եւ ո՛ւր որ կ'երթաս, այնտեղից նորէն գնա՛ ու գնա՛ առանց հանգրւան,  
Իմ բարի ճամբա՛յ, տա՛ր ինձ, կորցրո՛ւ. չքիմ, տանջանքս ո՛չ ոք չտեսնի:

Ի՞նչ կայ մեր ետեւ, որ մենք կարօտով ետ դառնանք նորից, իմ քարաւանս,  
Թողել ենք մենք վիա՞ռք, զանձ ու հայրենի՞ք, թողել ենք օրէ՞նք եւ արդարութիւն,

Թողել ենք մարդկա՞նց, համայնք ու ամբո՛խ, դատ ու իրաւունք եւ իշխանութիւն.  
Քայլէ՛, կանգ մի՛ առ — թողել ենք միայն շղթայ ու կապանք, կեղծիք ու պատրանք...

Եւ ի՞նչ է փառքը, — այսօր քեզ մարդիկ կ'բարձրացնեն եղջիւներից վեր.  
Վաղը նոյն մարդիկ քեզ վայր կ'նետեն սմբակների տակ ճմլելու համար:

Ի՞նչ է պատիւը, յարգանքը մարդկանց. — պատւում են ոսկուց եւ վախից միայն,  
Իսկ երբ սայթեցիր, կօշիկիդ փոշին մեծ մարդ է դառնում եւ քեզ հարւածում.

Եւ ի՞նչ է գանձը, որով յիմարը տիրում է մարդկանց, եւ սէր եւ հանճա՛ր, —  
Քիւրաւորների քամւած արիւնը, որբի արտասունք, մեռելների միս:

Հայրենիքն ի՞նչ է — յաւէրժական բանդ, պատերազմի դա՛շտ, նախճիր ու արիւն,  
եւ նրա համար անխիղն հզօրը բիւր կաւափներից բուրգեր է կանգնում:

Ատում եմ, աւա՛ղ եւ հայրենիքը, պերճ արօտավայրն լիրք հարուստների,  
Որի հողն արնոտ անդուլ հերկողը չոր քար է կրծում իր հացի կողքին:

Ատո՛ւմ եմ, ատո՛ւմ ամբոխին ռամիկ, մեծ յիմարն է նա, ստրուկ բռնակա՛լ,  
Ոզին հալածող, բռնութեան խարիսխ, յիմարութեան մէջ զօրաւոր գազան:

Ի՞նչ է համայնքը — թշնամու բանակ եւ մարդը այնտեղ շղթայւած գերի,  
Ե՞րբ է հանդուրժել հոգուդ թուիչին եւ սլացումին նա վեհ մտքերի:

Նողկալի համայնք, հեղծուցիչ օղա՛կ, քո չարն ու բարին — ահեղ խարազան,  
Մի անհուն մկրատ բոլորին խուզող՝ միահաւասար եւ միանման:

Ի՞նչ է օրէնքը՝ թիրտ ուժեղների այդ սուրը դաժան՝ մարդկանցից օրինած,  
Անզօրի զլխին կախւած յաւիտեան, խեղճին խողխողող, հզօրին պաշտպան:

Բոլոր զայրոյթով զզւո՛ւմ եմ, ատում մարդկանց օրէնքը եւ իրաւունքը,  
Օրէնքով մորթում, բռնաբարում են եւ իրաւունքով լկում, կեղեքում:

Տա՛ր ինծ, ազատի՛ր, ծածկիր ինծ անհետ մարդկանց արիւնոտ արդարութիւնից.  
Թո՛ղ որ վազրերը իմ սիրտը պատուեն, արդարութիւնը քան թէ փրկէ ինծ:

Զգւո՛ւմ եմ, ատում իշխանութիւնը — պատերազմների յաւէրժ յերիւրող,  
Անյա՛գ վաշխառու, անկուշտ ծրիակեր, արեան բաղանիք, սերունդներ լափող:

Անցած դարերի, գալիք դարերի մեծ դահիճն է նա եւ մեծն աւազակ,  
Սարսափներ վիժող, ոխակալ վոհմակ, հազարանիրան մոլի բորենի:

Նա փշրում է միշտ մեր ուսերը վազ, ամէն ուր հասնում ճգմում է մարդուն,  
Եւ հրէշի պէս կրծքիս է նստել, բռունցքն է ահեղ սղմել ճակատիս:

Եւ ամէն ինչ է իշխանութիւնը — իրաւունք, օրէնք եւ արդարութիւն,  
Նա ինքն է խիղճը, եւ չարն ու բարին, իսկ դու — զերեզման, դու — ոչնչութիւն:

Մեր ամէն քայլին շղթայ է դրել, փականք է դրել մեր լեզւին, մտքին,  
Եւ արդարութեան դաժան անունով կախում ու մաշկում ծերին, մանուկին:


Ապիկար մարդի՛կ, ստրուկ ու վախկուտ, ո՞վ տւեց սուրը նմանիդ ձեռքին,  
Ո՞վ տւեց նրան վրէժի իրաւունք՝ իշխել, խողխողել իր նմաններին:

Տա՛ր ինծ, քարաւան, իժերին յանձնի՛ր, թաղիր հէգ սիրտս աւազների տակ,  
Տա՛ր ինծ, ազատի՛ր իշխանութիւնից, ազատի՛ր նրա հովանուց վայրագ...»

Խոլ կայծակները հրեղէն սրով ծւատում էին վաշտերն ամպերի,  
Եւ արշաւասոյր՝ փշրում էին հեռաւո՛ր, անտես լեռների ճակտին:

Եւ մըրիկները մոնջում էին, արմաւն ու նոմին շաչում, շառաչում,  
Եւ քարաւանը արա՛գ, սրընթա՛ց, զի՛լ, քառատրոփի վազում էր, թռչում:

Վազո՛ւմ էր, թռչո՛ւմ, զըլնգ հա՛ զըլնգ, փոշու ամպերով ծածկելով ճամբէն,  
Ասես, փախչում էր չար իշխանութեան քինուտ բռունցքից, որ չնասնի իրեն...»



Հինգերորդ Սուրահ

Եւ միջօրէի բարկ արեւի տակ խիստ բուրում էին նարճիս ու զաթար,  
Եւ քարաւանը փոշու մէջ կորած, քրտնաթոր, յոգնած քայլում էր դանդաղ:  
— «Գնա՛, քարաւան, խորշակ ու մրրիկ ճեղքելով անցի՛ր, մտիր անապատ.  
Այսպէս էր խօսում զայրացած սրտում Աբու Մահարին, մեծ բանաստեղծը:  
Թո՛ղ անապատի տաք հողն իմ դէմ գայ, աւազի վրայից հետքերս ջնջէ,  
Որ մարդը երբեք տեղս չգտնի, իմ շնչած օդը մարդը չը շնչէ:  
Այնտեղ մարդկանցից ապահով կը լնեմ, էլ ո՞ւմից միթէ ես երկիւղ ունեմ,  
Թող որոտընդոստ մոնչիւններով վագր ու առիւծ արշաւեն իմ դէմ:  
Տեսնում եմ ահա՛ շէկ առիւծներին դեղին շեղերից ազքիս են նայում,  
Տեսնում եմ նրանց, որոնց ոսկեղին բաշերից հողմը կայծեր է պոկում:  
Արի՛ք, կանում եմ, ես փախչողը չեմ, արի՛ք, լափեցէ՛ք միրտս վիրաւոր,  
Ես ետ չեմ դառնայ մարդկանց մօտ երբեք, գուռը չեմ բաղիսի մարդու նենգաւոր:  
Մարդկանց մօտ պէտք է աչալուրջ լինիս, միշտ ոտքի վրայ եւ սուրը ծեռքիդ,  
Որ քեզ չ'ըլուկեն, քեզ չ'յօշոտեն թէ՛ բարեկամդ եւ թէ թշնամիդ:  
Մարդիկ ի՞նչ են որ . . դիմակւած դեւեր, ժանիքներ ունեն, անտես ճիրաններ,  
Սմբակներ ունեն եւ որոնող են, եւ նրանց լեզուն — թունաւոր սուսեր:  
Եւ ո՞վ են մարդիկ. — մի պատառ հացիդ հազար աչք ծգող, քրտինքիւ լափող,  
Սնկումիդ ուրախ, մատնիչ, ուրացող, աղւէսների հօտ եւ դահի՛ճ, դահի՛ճ,  
Թշուառութեան մէ՛ջ, աղքատութեան մէ՛ջ փոքրոզի՛, քծնո՛ղ, վաճառւո՛ղ, քսո՛ւ,  
Հարստութեան մէջ անգո՛ւթ, մեծամի՛տ եւ ամբարտաւան եւ վրիժառու:

Համրելով մէկ մէկ անթիւ քայլերը իմ քարաւանի, իմ անծա՛յր ճամբու,  
Անթիւ քայլերը չեն հասնում չափին մի օրում գործած յանցանքին մարդու:

Սում եմ ահա՛ եւ արեւելքին, հիւսիս հարաւին եւ արեւմուտքին,  
Որոնց հողմերը՝ իրար հետ ներհակ՝ լսում են մէկտեղ իմ արդար խօսքին:

Լսէ՛ք ու տարէ՛ք խօսքս հրեղէն, թո՛ղ ծովներից ծով աշխարհն իմանայ,  
Որ աւելի վա՛տ, աւելի զազի՛ր, քան մարդը դաժան՝ այդ մարդն է նորից:

Սիրում եմ, սիրում գայլին, չախկալին, բայց մարդուն սիրել չեմ կարող երբեք:  
Ո՞վ է ինձ տանջել նրա չափ անգութ, եւ ո՞վ է լակել նրա չափ արիւն:

Լաւերն աշխարհում զոհւում են, մեռնում վատերի համար եւ վատերն յաւէրժ  
Տանջում են, լըլկում մի բուռ լաւերին, — եւ կեանքի արտում որոմն է աճում:

Ապիրատ աշխա՛րհ, ուր հզօր ոսկին դարձնում է գողին պատւաւոր, ազնիւ.  
Ապուշին՝ հանճար, վախկոտին՝ կտրիճ, տգեղին՝ չքնաղ եւ պոռնիկին՝ կոյս:

Մարդկային աշխա՛րհ, ուր ամենուրեք հզօրի առաջ թոյլը մեղաւոր,  
Եւ մարդը տգեղ՝ ինչ որ անում է այս գարշ աշխարհում սոսկ նիւթի համար:

Սոսկ նիւթի համար, նրան միշտ գերի, եւ թաթն արիւնոտ աստւածացնող. —  
Ահա մարդը միշտ՝ պատկերն Աստծու, սակայն իրապէս Շէյթանի վիժւածք:

Այնքան ժամանակ, որքան աստղերը անշէջ թարթում են լուռ անապատին,  
Եւ գալարուում են շեղերն աւազի, շո՛ւմ ու ճշո՛ւմ նման օձերին. —

Ես չեմ ուզենայ ողջունել մարդկանց, դէպի համայնքը ես ետ չեմ դառնայ,  
Բորենիները թող ինձ յօշոտեն, բոցոտ հողմերը շախն ինձ վրայ:

Փախի՛ր, քարաւան, այդ պոռնկութեան լպի՛րշ ու արբշի՛ռ, ցո՛փ խնճոյքներից,  
Ստի եւ կեղծի հրապարակներից եւ վաճառաքի պիղծ շուկաներից:

Կնոջի՛ց, սիրուց, համայնքի՛ց փախի՛ր, արդարութեանից, վրէժի՛ց փախիր,  
Փախի՛ր ընկերից եւ հայրենիքից, փախի՛ր, կանգ մի՛ առ մարդկանց ստւերից.



Անապահության Սուրահ

Գնա՛, քարաւան, սմբակներիդ տակ տրորի՛ր, կոխի՛ր օրէ՛նք, իրաւո՛ւնք,  
Եւ ճանապարհիդ փոշիով ծածկիր, թէ չարն ու բարին, թէ իշխանութիւն...»

Իրենց աղեղի պարանոցները՝ ուղտերը լարած նետերի նման,  
Զի՞լ վազում էին եւ իրենց յետքից թողնելով անծայր փոշու քարաւան:

Զի՞լ վազում էին խանձւած դաշտերով դէպի անյա՛յտը, դէպի հեռաստան,  
Եւ ծածկում էին փոշու ամպերով անծի՛ր դաշտերը, քաղաք ու աւան:

Կարծես՝ վախեցած փախչում էր արագ, առանց հանգրւան, Աբու Մահարին,  
Կարծես՝ օրէնքը, կինն ու համայնքը նրան կը ընկոիս հետեւում էին:


Եւ քարաւանը զրոնգ հա՛ զրոնգ՝ առանց նայելու անցնում էր անդարձ  
Բուրգերի տակով մեծ քաղաքների՝ հացի ու կրքի ժխորով լցւած:

Վազում էր արա՛գ՝ յիմարութեան մէջ դարեր քարացած գիւղերի մօտով,  
Վազում էր անդուլ դէպի անապատ ոսկէշող աստղի անզուսպ կարօտով:

Քարաւանն հերսոտ՝ օրեր—գիշերներ չափում էր ճամբէն ոլո՛ր ու մոլո՛ր,  
Եւ հոգու խորքում Աբու Մահարին խորհում էր ցակատ՝ ճակատը խողոր:

Եւ լալիս էր նա առանց արցունքի եւ նրա վիշտը անհուն ու անվերջ,  
Ինչպէս իր ուղին, որ գալարւում է, ծգում է անծայր եւ վախճան չունի:

Եւ ետ չէր նայում անցած ճամբէրին եւ չէր ափսոսում թողած, անցածին,  
Ողջո՛յն չէր վերցնում, ողջո՛յն չէր տալիս անցնող դարձող քարաւաններին...»



Եւ քարաւանը Աբու Լալայի Արաբըստանի մեծ անապատի  
Դարբասների մօտ կանգ առաւ յոզնած...»

Եւ անապատի հորիզոնների հեռո՛ւ ափերը հրդեհում էին,  
Մութն հաւաքում էր փէշերը թաւշեայ, բոցերով բոսոր երկինքն էր ծփում:

Եւ Աբու Լալան քարաւանի մօտ նստեց մենաւոր, հանգիստ եւ պայծառ,  
Ոսկի ժայռերին գլուխը յենած՝ հայեացքը սուզած լուսեղէն հեռուն:

— «Օ՛, ինչ ազատ եմ, անսահման ազա՛տ, մի՞թէ կարող է անապատը մեծ  
Պարփակել, գրկել իր ափերի մէջ ազատութիւնս՝ անե՛զր, անհուն:

Ո՛չ մի մարդկային ծեռք ինձ չի համնի, ո՛չ մի մարդկային աչք ինձ չի տեսնի,  
Օ՛, ազատութիւն, դու դրախտային չքնաղ վարդերի լուսեղէն բուրմունք:

Իո լոյս վարդերով դու պսակի՛ր ինձ, վառի՛ր զահերդ իմ տխուր հոգում,  
Օ՛, ազատութիւն, դու դրախտային վառ բլուրների անմահ Ալ Կօրան:

Զքնաղ անապա՛տ, դու միայնութեան ոսկեղէն աշխարհ, քեզ հազա՛ր ողջոյն,  
Անարատ հողեր, ուր մարդը մարդուն չէ լըկել երբեք, օրինեալ լինիք դո՛ւք:

Տարածւի՛ր անծիր, փոխի՛ր աւազիդ անափ ծովերը աշխարհի վրայ,  
Ծածկի՛ր ողջ մարդկանց, քաղաքները ժանտ, ծածկի՛ր աւաններ, քէօշք ու խրճիթներ:

Վիշապ-հողմիդ հետ ազատութիւնը թո՛ղ գահակալէ աշխարհի վրայ,  
Եւ ոսկեվառէ վսեմ արեւը աշխարհասփիւռ ազատութիւնը:»

Հազա՛ր ու հազա՛ր հրաշալիքներով եւ հրաբորոք հրապոյներով  
Ոսկի վարսերը անծայր տարածած՝ Շէմս Աբեւն ելաւ, Աստծուց հզօր:

Եւ վեհ արեւի աչքերի առաջ փուեց, ծաւալւեց անապատը մեծ,  
Վառ վառ հուրհրաց, ինչպէս տիտանեան, հսկայ առիւծի ոսկեղէն մորթի.

— «Սալամ քեզ, Արեւ, շիւքը բիւրաբիւր, դո՛ւ, իմ անմահ մայր, մայրական դու գիրկ,  
Դո՛ւ միակ բարի, դո՛ւ յաւէտ զթոտ, դու միակ իմ սէր, դո՛ւ միայն սո՛ւրբ, սո՛ւրբ,

Դո՛ւ, որ հիացքով եւ անմահութեամբ լցրեցիր հոգին մեծ Զօրօաստրի,  
Ահա՝ իմ հոգին — մի ծարաւ բողբոջ. թափէր նրա մէջ քո պուրպուր գինին:

Տիեզերական դու անհուն բաժակ՝ ոսկի արքեցման եւ երանութեան,  
Դու՝ անհուն բաժակ հրապոյրների եւ հրճւանքի անմահ գինով լի:

Հարքեցրո՛ւ ինձ, հարքեցրո՛ւ ինձ, քո անմահ գինով հարքեցրո՛ւ ինձ,  
Մոռանամ մարդուն, վիշտն ու չարիքը, սուտն ու մուայլը մոռանամ յաւէ՛րժ:

Տիեզերական հազարահանդէս դու մեծ խրախնանք, դո՛ւ, բարի արեւ,  
Խաւարների դէմ անյաղթ ախոյեան, դու Աստծուց հզօր, դո՛ւ ուրախութի՛ւն:  
Քո երջանկութեամբ, քո յաւէրժութեամբ, քո պայծառութեամբ հարքեցրու ինձ,  
Եւ քո բուրալից լոյս անուրջներում տո՛ւր ինձ անցեալի անզարթ մոռացում:

Դո՛ւ միակ բարի, դու յաւէտ զթոտ, դո՛ւ միակ իմ մայր, դու միայն սուրբ, սո՛ւրբ,  
Մահը խորտակող, զարունների մայր, դո՛ւ զերահրաշ, միա՛կ զեղեցիկ:

Ես սիրո՛ւմ եմ քեզ, ես սիրո՛ւմ եմ քեզ, կիզիր, խոցիր ինձ հրեղէն սիրով.  
Եւ ոսկեմանն վարսերդ շքեղ փուի՛ր ինձ վրայ եւ գուրգուրի՛ր ինձ:

Եւ արիւնոտի՛ր իմ շրթունքները քո հրդեհավառ լոյս համբոյրներով,  
Երջանկատիւու քո հուր գիրկը բա՛ց, ես սիրաբորբոք թոչո՛ւմ եմ քեզ մօտ:

Իմ ազնիւ ուղտե՛ր, ոտքի կանգնեցէ՛ք, դարձաւ Մահարին իր քարաւանին,  
Եւ թօթափեցէ՛ք ծեր սրունքներից ստրուկ աշխարհի զազրելի փոշին:

Օ՛, վերջին անգամ լսէք իմ խօսքը.— ատո՛ւմ եմ ես ծեզ, հեռաւոր մարդի՛կ՝  
Գարշո՛ւմ եմ, ատում ծեր կրօնները, ծեր լաւն ու վատը, ծեր չարն ու բարին:

Որոնք միմիայն շղթայ են կռում եւ ստրկութեան զնդաններ կոփում.  
Օ՛, վերջին անգամ ատո՛ւմ եմ ես ծեզ, եւ յաւէրժ, յաւէրժ ատո՛ւմ եմ ես ծեզ:

Եւ թող խլանան իմ ականջները՝ յաւէտ զսեմ աղմուկն աշխարհի,  
Յաւէտ կուրանամ աշխարհի համար, եւ ետ չնայեմ տեսնելու մարդկանց:

Շարժւիր, քարաւան, դարե՛ր եւ դարե՛ր թուիր, սլացիր արեւը դէպի,  
Նրա լուսեղէն, բոցեղէն գրկում, որ արեւանամ եւ յաւերժանամ:

Օ՛, իմ մայր արեւ, քո ոսկեփրփուր ծիրանիդ ծզիր ուսերիս վրայ,  
Որ ես յաղթական, լոյս-փառքերիդ մէջ սլանամ յաւէրժ դէպի, դէպի քեզ...»



Խօթերորդ Սուրահ

Եւ ուղտերն, ասես, ոսկի մակոյկներ, հուր ալիքները ծով-անապատի  
ձեղբելով արագ սլանում էին դէպի բոցեղէ՞ն, ոսկեղէ՞ն հեռուն:

Եւ ոչ մի սամում հրաշունչ թեւով չէր կարող հասնել նրանց արշաւին,  
նրանց թռիչքին չէր կարող հասնել սլաքը նետի վայրի բեղուինի:

Օազիսներից մայր արմաւենին վառ հէքեաթների լոյս փէրիներից  
Համբոյր էր բերում, սիրոյ ողջոյներ, անո՞ւշ դայլայլում նրա ականջին:

Բայց Աբու Լալան չէր ուզում լսել քնքուշ սօսափին, սիրոյ ողջոյնին,  
Թռչում էր անդուլ դէպի արեւը, եւ ինքն էլ պայծառ արեւի նման:

Նրա ետեւում լոկ անապատն էր փոււած հոլանի լրյախ զրկի մէջ,  
Իսկ զիսի վերեւ արեւն էր նազում շափիւղեայ վարսով եւ լուսափթիթ:

Ուղտերը արծակ պարուսաններով հուժկու, մոլեգին, այնպէս խօլական,  
Սլանո՞ւմ էին, զիւ թռչո՞ւմ էին հրեղէն թափով խենթ ու խելագար:

Եւ արեգական վառ ցնցուղի տակ բոցկտում էին ուղտերը զւարթ,  
Եւ բարձրադողանց կայլակում էին զանգակներն ազա՞տ, պայծառ, ցնծազին:  
Եւ ոսկէփրփուր ծիրանին ուսին Աբու Մահարին յաղթական եւ վեհ՝  
Թռչում էր աննինջ, թռչում էր անխոնջ դէպի արեւը, անմահ արեւը...

Ա Ն Ր Զ



ՕՄԱՐ ԽԱՅԱՄԻ ՎԵՃԸ

ԱՍՏԾՈՒ ՀԵՏ

Օմար Խայամը, Խորասանի վշտահար բանաստեղծը, ոսկեղէն նարգիս-ների մէջ նստած՝ աշխարհի ունայնութիւնը մոռանալու համար կաւէ գաւթից զինի էր խմում:

Սյդ միջոցին բարձրացաւ յանկարծ մի սատանի-քամի, որ իր պոչի վրացցւած՝ պտոյտ-պտոյտ գալով, խելագարի պէս այս ու այն կողմն էր վազվզում, ծեռքն ընկածը քշում, զարդում, կոտրում:

Մէկ էլ հարամու պէս արշաւեց նա խեղճ խայամի վրայ, անտես փէշերով տևեց, վայր քցեց զինու գաւաթը, կոտրեց կաւէ գաւաթը, զինին թափեց հողի վրայ:

Յետոյ խելառ ու չար քամին՝ թեւերը թափահարելով, սինլքորի նման սուլելով, շւշւացնելով՝ փախաւ, թռաւ հեռուները:

Խայամը մէկ զայրացած նայում էր հեռացող քամու ետեւից, մէկ ափսոսանքով նայում էր կոտրած գաւաթին եւ կենսաբաշն կարմիր հեղուկին, որ ծարաւ զետինը ծծեց մի վայրկենում թունդ հարբեցողի պէս:

Ապա աչքերը ծգեց կապուտակ երկնքին եւ այսպէս ասաց Օմար Խայամը, Խորասանի վարդերի տխուր ըլքուլը. —

Իմ վառ զինու գաւարն հողէ  
Դու, կոտեցիր, ո'վ Աստած.

Ուրախութեան դուռն իմ առաջ  
Դու փակեցիր, ո'վ Աստած:

Թռղ բերանս լցի հողով,  
Որը խմեց իմ զինին.  
Ի՞նչ արեցիր, մի՞քէ դու եւ  
Թռւնդ հարբած ես, ո'վ Աստած...

Եւ Աստծուն լսելի եղաւ Խայամի տրտունջն ու յանդիմանութիւնը . բարկացաւ Աստւած , սաստիկ բարկացաւ , որ մի հողեղէն յանդգնում է այդպիսի բերան բանալ : Եւ պատժեց Աստւած Խայամին . բանաստեղծի բերանը ծռւեց , լեզուն կարկամեց . Էլ չէր կարող խօսել Խայամը , ունայնութեան քաղցրախօս բլրուլը :

Երբ անցաւ մի քիչ ժամանակ , զգաստացաւ Խայամը , տեսաւ ծանր պատիժը , զղաց եւ դարձաւ այսպէս թոթովեց դէպի Աստւած . —

Աշխարհումս մեղք չըգրծած  
Ո՞վ կոյ , ասա՛ , Աստւա՛ծ իմ .  
Եւ նա , որք չի մեղանչում ,  
Ի՞նչպէս կ'ապրի , Աստւա՛ծ իմ :  
Թէ վաս անեմ , թէ վաս խօսեմ ,  
Դուն էլ ինձ վաս պատիծ տաս ,  
Ուրեմն ի՞նչն է իմ եւ Ի՞ն մէջ  
Տարբերութիւնն , Աստւած իմ ...

Եւ Աստծուն լսելի եղաւ Խայամի զղումն ու իմաստալից խօսքը . զարմացաւ . թէ ի՞նչպէս մի հողեղէն կարող է այդպէս խելացի խօսել , ամաչեց ինքն իր մէջ , եւ ներեց Խայամին՝ վերստին շնորհելով նրան եւ ծիրանի գինի . եւ աւելի իմաստուն լեզու :

ԽԱՆՕԹՈՒԹԻՒՆԵՐ

Քասիտ.	Երկողանի , Երկայնածիզ գրւած պօմ , արաբերէն .
Սուրահ.	Գլուխ , հատւած .
Գաղպէլ.	Ափոյ երգ .
Բրիս.	Պետ , սատանայ .
Ճշազ.	Արաբական ծովեզերեն , նահանգ .
Շարքի.	Երգ .
Նարնիս.	Նարզիս . (Ճաղեկ) .
Զարար.	Ճերոն (պոյս անապատի) .
Շեմս.	Արաբերէն արեւ .
Սալամ.	Ողջոյն .
Շիւմբր.	Վառք , զինուրիւն .
Սամում.	անապատի տամ հողմ , խորակ .
Ար-Խորան.	Ղուրան :



## ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

	Դր.
1. — ԱՏԱՆԱՅԻ ԵՂԵՌՆԸ. — ՏԵՂԵԿԱԳԻՐ ՅԱԿՈԲ ՊԱՊԻԿԵԱՆԻ,	
Յրանիսի տը Փրկանեսի յառաջարանով . . . . .	12,50
2. — ԱՐԻՒՆԻ ԶՈՐԸ, Վիպակ Կիլիլիոյ Պատմ. Կեամբին	
«Յետ մանու հց» մը Սմբատ Բիւրատի (Սպառած) . . . . .	20
3. — ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ ԵՒ ՀԱՅԿ. ՀԱՐՅ, Սմբ. Բիւրատի . . . . .	10
4. — ՀԱՅ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՏՈՒՄԾ ԶՈՀԵՐԸ, Հայ Բժշկ. Միութիւն (Սպառած) —	

## ՄԱՏԵՆԱՇԱԲ «ՀԱՅԿԱՇԵՆ»

1. — ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ, Դրամ 4 արար, Աղ. Շիրվանզադի, Բ. Տպագր.	40
2. — ԱԲՈՒ ԼԱԼԱ ՄՈՀԱՐԻ, Քափէ, Աւ. Խամակիսինի, Գ. Տպագրութիւն	20
3. — ՆԱՄՈՒՄ, Դրամ 4 արար, Աղ. Շիրվանզադի (Մամուլի տակ) Բ. Տպ.	60
4. — ԽՈՆԱՐՀՆԵՐԸ, Տիպէր, Յ. Օշականի, Ա. Հասնր, (Մամուլի տակ)	50

## Ա. Յ Ա Ֆ Ա Ր Ե Կ Ա

### ՀԵՏԶԵՏԵՏԵ ՄԱՄՈՒԼԻՆ ՊԻՏԻ ՅԱՆՁՆՈՒԻՆ

- 5. — ԿՈՍՄՈՊՈԼԻՑԸ, Պատմուածք, Աղ. Շիրվանզադի
- 6. — ԶԱՐ ՈՒԻ, Դրամ 4 արար Աղ. Շիրվանզադի
- 7-8 ԽՈՆԱՐՀՆԵՐԸ, Յ. Օշականի, Բ. և Գ. հատորները
- 9. — ՀԱՅԿԱՇԵՆ ԵՐԴԱՐԱՆ, Լիովատառք Գրպանի

2013

## ՄԵՐ ՀԱՅՈՒԹ

### ԿԻԼԻԿԻԱ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ

Թիւ 37, Գապրիսթան Փողոց—Բերա

Կ. ՊՈԼԻԱ

LIBRAIRIE "LA CILICIE,"

N° 37, Rue Cabristan — Péra

CONSTANTINOPLE

